ԳԻՆԸ 10 Կ.

Հաստատվում է
Ի Տ. Ներքգործժողկոմի Արտ. Վարչության
Վարչ. Վարչ Գլուխ՝

36
-11

№ 46
19 հուլիսի 1928
ԵՐԵՎԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հ. Ս. Խ. Հ.

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻՆ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՀ
Մ. Ա. ԱՐՇԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԵՐԵՎԱՆ 1929 թ.

ՏՊԱՐԱՆ ՀԵՐՄԵՍ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ,
ՄԱՐՔՍԻ ՓՈՂ. № 29
ԳՐԱՌԵՊ. № 1776բ.
ՏԻՐԱԺ 1000

ԱՐՔ
37431

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԽԽՀ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻՆ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

Ա. Նպատակը

1. Կենդանիներին հովանավորող ընկերության նպատակն է.—

ա. Հայաստանի հանրապետության սահմաններում պաշտպանել կենդանիներին անողորմ վերաբերմունքից։

բ. Գործ դնել բոլոր միջոցները կենդանիների դրությունը բարելավելու համար։

2. Այս նպատակներին հասնելու համար ընկերությունն և իր անդամները նախազգուշացնելու յեն և, ըստ հնարավորության, վերացնելու այն դաժան վերաբերմունքն և ի չարը գործադրվող միջոցները, որոնք տեղի յեն ունենում տերերի և վոչ-տերերի կողմից կենդանիների վերաբերմամբ. այն է՝

ա. Կենդանիներին չզրկել նրանց գոյությունը պահպանելու անհրաժեշտ միջոցներից՝ կերից և ջրից։

բ. Նրանց հիվանդանալու դեպքում հասցնել բժշկական ոգնություն։

գ. Չաշխատեցնել նրանց իրենց ուժերից վեր և չբեռնել նրանց իրենց բնական ուժերից բարձր։

դ. Նրանց մորթելու ժամանակ չվերաբերվել անողորմ։

յե. Զբաղվել նրանց հաճույքի համար և չկրա-
վեցնել նրանց իրար հետ։

Վերոհիշյալ հանգամանքների համար ընկերու-
թյան անդամները հսկողություն են ունենալու կառա-
պանների, ախոռապանների, ուղտապանների, կարա-
վանների տերերի, քարվանսարա պահողների, սայլա-
պանների և այլ պետական ու հասարակական հիմնարկ-
ձեռնարկների և մասնավոր անձանց ու բոլոր այն
առևտրա-արդյունաբերական հիմնարկների վրա, վո-
րոնք ոգտագործում են կենդանիներին իրրև փոխա-
դրության և սննդամատակարարման միջոց։

Բ. Իրավունքները յեվ պարտականությունները

3. Ընկերության յուրաքանչյուր անդամ, յերբ-
նկատում է անողորմ վարմունք դեպի կենդանիները,
անմիջապես կազմում է արձանագրություն, ստորա-
գրում և ինքն և ստորագրել է տալիս վորևե վկայի,
բացի այդ՝ յեթե ներկա յե միլիցիայի ներկայացու-
ցիչը՝ նրան և ուղարկում է համապատասխան մարմին-
ներին ի պատշաճ տնորինություն։

4. Ընկերությունն իր նպատակին հասնելու հա-
մար՝

ա. Կազմակերպում է խորհրդակցություն, թե
ինչպես բարելավե կենդանիների կենցաղը։

բ. Իր խորհուրդներով ու ցուցմունքներով մըտ-
ցնում է սպանդանոցի մեջ կենդանիները մորթելու
ավելի բարելավ յեղանակներ։

գ. Պետական ու հասարակական հիմնարկություն-
ների միջոցով, այն է՝ կին-բժիշկների, դպրոցների,

դյուղխորհուրդների և այլն, ներշնչում է մարդկանց
մեջ սեր և խանդաղատանք դեպի կենդանիները, վոր-
պիսի նպատակի համար ընկերությունը հրատարա-
կում է և ձրի տարածում ժողովրդի մեջ այդ ուղղու-
թյամբ գրականություն, ինչպես՝

1. Ուսումնասիրություն կենդանիների կենցաղի
ու նրանց հոգեբանության մասին։

2. Նրանց մարմնակազմության ու ամման մասին։

3. Նրանց հիվանդության ու բժշկության մասին և

4. Փոքրիկ վեպիկներ ու պատմվածքներ նրանց
կյանքից։

դ. Տալիս է մրցանակ կառապաններին, սայլա-
պաններին, հովիվներին, դարբիններին և այն բոլոր
անձանց, վորոնք լավ վերաբերմունք են ցույց տալիս
դեպի կենդանիները, նույնպես և միլիցիոներներին՝
նրանց սույն կանոնադրության կետերի իրագործման
ջերմ աջակցության համար։

5. Որինական աջակցություն ստանալու համար
ընկերությունը դիմումե պետական հաստատություն-
ներին և պաշտոնական անձանց, ներկայացնելով նը-
րանց Հողժողկոմատի հետ համաձայնեցրած իր ծրա-
գիրը, թե ինչ միջոցներով կարելի յե կենդանիներին
պաշտպանել վատ վերաբերմունքից նրանց տերերի և
վոչ-տերերի կողմից, այլ և ներկայացնելով Հողժող-
կոմատի միջոցո՝ որենսդրական մարմիններին նախա-
գծեր հանցավորներին քրեական և վարչական պա-
տասխանատվության յենթարկելու։

6. Ընկերությունն իրավաբանական անձ է և ու-
նի իր կնիքը հետևյալ վերատառությամբ «ՀՍԽՀ կենդա-
նիներին Հովանավորող Ընկերություն» կամ կրճատ

«Հայկենդհով», իսկ ռուսերեն „О во Покровительства животным ССРАрм." կամ կրճատ՝ „Айкентов"։

7. Ընկերությունն իր նպատակն իրագործելու համար իրավունք ունի Հայաստանի Հանրապետության սահմաններում բաց անելու իր բաժանմունքները։

8. Ընկերությունն իր միջոցներն ընդարձակելու համար իրավունք ունի կազմակերպելու՝ զբոսանքներ, համերգներ, յերեկույթներ, ցերեկույթներ, վիճակախաղեր, ներկայացումներ, հրատարակություններ և այլն։

9. Ընկերության կենտրոնական վարչությունը գտնվում է Յերևան քաղաքում։

10. Ընկերությունն իր գործունեությունն ընդլայնացնելու համար կազմակերպում է աշակերտական-ուսանողական, պատանեկական խմբակներ կամ ընկերակցություններ։

11. Միլիցիայի բոլոր անդամները, առանց անդամակցական վճարի, համարվում են ընկերության իսկական անդամ։

12. Ընկերության անդամ կարող են լինել Հայաստանի բոլոր չափահաս քաղաքացիներն և քաղաքացուհիները, վորոնք ընտրողական իրավունքից զրկված չեն։

13. Ընկերության անդամների թիվը չի սահմանափակվում։

14. Ընկերության իսկական անդամների անդամակցական տարեկան վճարն է 2 ռուբլի։

ԾԱՆՈԹ.— Ընդհանուր ժողովը իրավասու յե փոխելու անդամավճարի չափը։

15. Ընկերության անդամները մասնակցում են ընկերության բոլոր ընդհանուր ժողովներին ընտրելու և ընտրվելու իրավունքով։

ԾԱՆՈԹ.— Յուրաքանչյուր անդամ ունի միայն մի ձայնի իրավունք և գործադրում է այդ իրավունքը անմիջաբար, առանց ուրիշին փոխանցելու։

16. Ընկերության յուրաքանչյուր անդամ, իրավազոր՝ ա. Հայաստանի հանրապետության սահմաններում միշտ և ամենուրեք պաշտպանելու կենդանիներին չարչարանքից, տանջանքից, նրանց հետ տերերի և վոչ-տերերի կողմից կոպիտ վերաբերմունքից. ընկերության անդամն անձնապես անզոր լինելու դեպքում դիմում և իշխանության անմիջական աջակցության։

17. Ընկերության յուրաքանչյուր անդամ ստանում է ընկերության տոմս, վոր նա Հայաստանի հանրապետության կենդանիներին հովանավորող ընկերության անդամ է, վորպիսի տոմսը նրան տրվում է ընկերության վարչության նախագահի և քարտուղարի ստորագրությամբ, վավերացրած ընկերության կնիքով։

18. Ընկերությունն իր անդամներին բաժանում է կրծքին կրելու ժետոն։

19. Ընկերության անդամին տրված տոմսը ծառայում է նրա համար իբրև վկայական այն դեպքում՝ յերբ կարիք է լինում դիմելու միլիցիայի աջակցության, կենդանիներին պաշտպանելու համար։

20. Ընկերության անդամը, յեթե վեց ամսվա ընթացքում մուծած չի լինում իր անդամակցական վճարը՝ համարվում է ընկերության անդամակցությունից հեռացված։

ԾԱՆՈԹ.— Հեռացված անդամը կարող է իր իրավունքները վերականգնել՝ անդամակցական վճարը մուծելուց հետո, վարչության տնորինությամբ։

21. Ընկերության հաշվետու տարին հաշվվում է հունվարից-հունվար։

ԾԱՆՈԹ.— Ընկերության առաջին վոչ-լրիվ տարին համարվում է լրիվ տարի։

Գ. Վարչություն

22. ա. Ընկերության գործերը վարում է ընդհանուր ժողովի կողմից ընտրված վարչությունը, որը կազմված է լինում 5 անդամից և յերկու փոխանդամից։

բ. վարչությունն ընտրում է իր միջից մի նախագահ, մի փոխնախագահ, մի քարտուղար և մի գանձապահ։

23. Վարչությունն ընտրվում է մեկ տարի ժամանակով։

24. Վարչության անդամ ընտրված համարվում է այն 5 անձը, որոնք ստանում են ավելի ձայն, իսկ նրանցից պակաս ձայն ստացողները համարվում են փոխանդամներ։

25. Վարչության նախագահը հսկում է ընկերության կանոնադրության ճշգրիտ կատարման և կիրառման վրա, բաց է անում և փակում է վարչական նիստերը։

ԾԱՆՈԹ.— Մասնագիտական հարցեր քննելիս ու վճռելիս՝ վարչությունը կարող է հրավիրել իրազեկ (մասնագետ) անձեր խորհրդակցական ձայնի իրավունքով։

26. Վարչության քարտուղար-անդամը վարում է ընկերության բոլոր գրագրություններն ու գործավարությունը։

27. Վարչության գանձապահ-անդամը վարում է ընկերության հաշվետվությունն ու դրամական գործերը։

ԾԱՆՈԹ.— ա. Ընկերության միջոցները, բացի ընթացիկ ծախքերի համար հատկացրած գումարներից, ի պահ են տրվում պետական բանկը, կամ խնայողական դրամարկղը։

բ. Բանկից գումարներ դուրս բերելու համար չեկը ստորագրում են նախագահը կամ փոխնախագահն և մյուս անդամներից մեկը։

28. Վարչության նիստերը կարող են կայանալ յերբ ներկա յե նախագահը կամ փոխնախագահն և վարչության յերկու անդամը։

29. Որակարգի բոլոր խնդիրները վճռվում են ձայների պարզ մեծամասնությամբ։

30. Վարչության նիստերը լինում են ամիսը մեկ անգամից վոչ պակաս։

ԾԱՆՈԹ.— Այդ նիստերին մասնակցել կարող են ճյուղերի ներկայացուցիչները խորհրդակցական ձայնի իրավունքով, ինչպես և ներկա կարող են լինել ընկերության բոլոր անդամները։

31. Ընդհանուր ժողով հրավիրվում է վարչության կողմից տարին վոչ պակաս քան 2 անգամ։

ԾԱՆՈԹ.— Ընդհանուր ժողով վարչությունը հրավիրում է և ընկերության 15 անդամի գրավոր պահանջով։

32. Ընդհանուր ժողովում հարցերը վորոշվում են ձայների բացարձակ մեծամասնությամբ, բաց քվեյարկությամբ։

33. Հերթական ընդհանուր ժողովը նշանակվում է՝

ա. Վարչության վորոշումների յեզրափակման համար։

բ. Նայելու և հաստատելու վարչության ներկայացրած առաջիկա տարվա նախահաշիվը։

գ. Քննելու և հաստատելու՝ 1. վարչության կողմից ներկայացված կանոնները, 2. նրա տարեկան հաշվետվությունն ու գործավարությունը, 3. վարչության կողմից անդամներին տրված հրահանգներն և 4. սույն կանոնադրության փոփոխման համար առաջարկված հավելումներն ու հապավումները։

34. Կանոնադրության փոփոխության իրավունքը վերապահվում է ընկերության ընդհանուր ժողովի վորոշման՝ ժողովի ներկա յեղողների ձայնի 2/3 մասով։

35. Վարչությունը տարեկան ընդհանուր ժողովին ներկայացնում է ի հաստատություն ընկերության տարեկան տեղեկագիրն իր գործունեության մասին։

36. Ընդհանուր ժողովը համարվում է որինական, յերբ ներկա յե լինում Ցերևանում գտնվող ընկերության անդամների 1/5 մասը։

ԾԱՆՈԹ.— Եթե ընկերության անդամների սակավության պատճառով ընդհանուր ժողովը չկայանա՝ այդ մասին կազմվում է արձանագրություն վարչության նախագահի և քարտուղարի կողմից, ապա մեկ շաբաթից հետո հրավիրվում է յերկրորդ ընդհանուր ժողովը, վորը, անկախ անդամների թվից, կհամարվի որինական։

Դ. Վերաստուգիչ հանձնաժողով

37. Վարչության հաշիվները ստուգելու և նրա գործունեությունը քննելու համար ընդհանուր ժողովի կողմից ընտրվում է 3 հոգուց կազմված հանձնաժողով, իր մեկ փոխանդամով, մեկ տարի ժամանակով։

38. Վերաստուգիչ հանձնաժողովը ստուգում է ընկերության հաշիվները տարեկան վոչ պակաս, քան յերեք անգամ։

39. Վերաստուգիչ հանձնաժողովը ընկերության տարեկան ընդհանուր ժողովին գրավոր զեկուցում է ներկայացնում վարչության հաշիվների ու նրա գործունեության մասին։

Ե. Նյութական միջոցները

40. Ընկերության նյութական միջոցները կազմում են՝

ա. Ընկերության անդամների տարեկան և միանվագ անդամակցական վճարները։

բ. Ստացված նվերները։

գ. Ընկերության ձեռնարկած հանդեսների, հրատարակությունների արդյունքն, այլև

դ. Կառավարական ու հասարակական հիմնարկություններից ստացված ոժանդակությունն և այլն։

Զ. Լուծարք

41. Ընկերության լուծարքի յենթարկվելու հարցը առաջարկում է իր նախաձեռնությամբ ընդհանուր ժողովին կամ ինքը վարչությունը, կամ ընկերության 25 անդամի ներկայացրած գրավոր առաջարկությամբ իր՝ վարչության միջոցով։

42. Ընկերությունը լուծարքի յենթարկելու համար անհրաժեշտ է Ցերևանում գտնվող անդամների 1/5 մասը և ներկա յեղողների 3/4 ձայնը։

43. Ընկերության լուծարքի յենթարկվելու դեպքում՝ նրա բոլոր ինչքն անց է կենում ՀՍԽՀ Հողժողկոմատին։

44. Ընկերությունը լուծարքի կարող է յենթարկվել նույնպես համապատասխան վերադաս մարմինների վորոշմամբ։

ՀԻՄՆԱԴԻՐ ԱՆԴԱՄՆԵՐ

1. [redacted]ն
2. Արմենակ Մալխասյան
3. Արտաշես Վարդանյան
4. Պաուլինա Մալխասյան
5. Մարգարիտ Միրզա Ավագյան
6. Հարություն Միրզա-Ավագյան
7. Խուրշուդ Մելիք-Փարսադանյան
8. Ստեփան Մալխասյան
9. Հովհաննես Մալխասյան
10. [redacted]
11. Եմին Տեր-Գրիգորյան
12. Տիգրան Բալանթար
13. Կոստանդին Մելիք-Շահնազարյան
14. Լևոն Գրիգորյան
15. Բարդուղիմեոս Ոհանջանյան
16. Տարագրոս
17. Ցերվանդ Թաղիանոսյան
18. Վարդան Թորոսյան
19. Հակոբ Մադաթյան
20. Արտաշես Տեր-Աբրահամյան
21. Սամվել Պետրոսյան։
22. Լևոն Նազարեթյան

Կ. Տ.

Իսկականի հետ ճիշտ է.
ՀՍԽՀ կենդ. Հովանավորող Ընկերության
քարտուղար՝ ՏԱՐԱԳՐՈՍ

ՀՀ Ազգային գրադարան
NL0301105

21. 294